

ԷԼ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԻ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

№	ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԱԿՆԻՇ
1	ԲԱՑԱՏՐԱԳԻՐ, ԷՏ ՄԱՍԻ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ԷՏ-1
2	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ	ԷՏ-2
3	ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՅԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԷՏ-3
4	ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՅԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԷՏ-4
5	ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ՀՈՂԱՆՑՄԱՆ ԿՈՆՏՈՒՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՈՆՏԱԺՄԱՆ ՍԽԵՄԱ	ԷՏ-5
6	ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԷՏ-6
7	ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ԲԱՇԽԻՉ ԿԵՏԻ ԷԼ.ՄՆՈՒՑՄԱՆ ԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ	ԷՏ-7
8	N 1 ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆԱԿԻ ԷԼ.ՄՆՈՒՑՄԱՆ ԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ	ԷՏ-8
9	N 2 ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆԱԿԻ ԷԼ.ՄՆՈՒՑՄԱՆ ԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ	ԷՏ-9
10	N 3 ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆԱԿԻ ԷԼ.ՄՆՈՒՑՄԱՆ ԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ	ԷՏ-10
11	N 4 ԷԼ.ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆԱԿԻ ԷԼ.ՄՆՈՒՑՄԱՆ ԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ	ԷՏ-11

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Մանկապարտեզի էլ. մասի նախագիծը կատարված է ՀՀ Քաղաքաշինության և Ճարտարապետության գործող նորմատիվների, CH544-82, CHPA-II-8,03-01-96, ПУЭ-2002 և հակահրդեհային պաշտպանության CH63-94, CHPA- II - 8,04-01-97 նորմերի պահանջներով:

Մոտղ ցանցի լարումն է - 380/220վ

Դրվածքային հզորությունը՝ Pդ= 70.1 կվտ, Հաշվարկային հզորությունը՝ Ph= 63.1 կվտ Հաշվարկային հոսանքը՝ I h= 112.6 Ա

Մանկապարտեզի էլ. սնումն գոյություն ունի: Տեղադրվում է նոր էլ.ուժային բաշխիչ կետ ՊՌ-11 որը միացվում է գոյություն ունեցող մալուխին :

Էլ.լուսավորության մատակարարման մագիստրալ գծերը իրականացվում են ՎՎԳ-5x6մմ և ՎՎԳ-5x10մմ մակնիշի մալուխներով պատերով սվաղի տակ և անցումներում, պլաստմասե սակառում, Մալուխի 5-րդ ջիղը՝ հողանցման լարն է: Բուֆետներում տեղադրվում են թվով 10 հատ 3կվտ հզորության գեյզերներ, որոնց սնուցումը իրականացվում է առանձին ավտոմատ էլ.անջատիչներից, իսկ գեյզերների մոտ՝ պատին տեղադրվում են սեփական կափարիչով ավտոմատ էլ. անջատիչներ:

Մանկապարտեզի ջրի շրջանառու պոմպերը դեկավարվում են առանձին կոմպլեկտ մագնիսական թողարկիչների միջոցով:

Լուսավորության խմբային գծերն իրականացվում են ՊՎ-3x4 մմ տիպի պղնձե հաղորդալարով, տեղադրումը սվաղի տակ, որի 3-րդ հաղորդալարը՝ հողանցման լարն է:

Խրոցակային վարդակների և լուսատուների ցանցերն իրականացվում են ՊՎ-3x2.5 մմ տիպի պղնձե հաղորդալարով, տեղադրումը սվաղի տակ, որի 3-րդ հաղորդալարը՝ հողանցման լարն է, որը միացվում է լուսատուների մետաղական իրաններին և վարդակների հողանցման հյակներին:

Ննջարաններում, խաղասենյակներում, հանդերձարաններում, դահլիճում և միջանցքներում խրոցակի վարդակները և էլ. անջատիչները տեղադրել հատակից1.8մ բարձրության վրա, իսկ մյուս սենյակներում՝ տեղադրվում են հատակից 0.4-1.2մ բարձրության վրա, էլ.վահանակները՝1.6 մ բարձրության վրա, իսկ պատի լուսատուները՝ 2.1 մ բարձրության վրա:

Մալուխներն ու հաղորդալարերը տեղադրվում և մոնտաժվում են ուղղահայաց կամ հորիզոնական, արգելվում է անկյունագծով մոնտաժումը:

Անձնակազմը էլ.հոսանքից պաշտպանելու համար խրոցակային վարդակների ցանցերին տեղադրվում են դիֆերենցիալ ավտոմատ էլ.անջատիչներ որոնք սարքավորված են պաշտպանման անջատման սարքավորումներով YՅՕ 30մԱ ինչպես նաև նախատեսվում է հողանցման հաղորդաշղթա, որը շենքի ներսում իրականացվում է 25x4 մմ հողանցման պողպատաշերտի օգնությամբ, իսկ դրսում 40x4մմ հողանցման պողպատաշերտի օգնությամբ, որն էլ իր հերթին էլ.գողման օգնությամբ միացվում է 50x50x5 մմ անկյունակներին, L=2.5 մ հողանցման էլեկտրողներին:

Բոլոր էլ.մոնտաժային աշխատանքները կատարվում են ըստ գործող էլեկտրատեխնիկայի կանոնների և նորմերի համաձայն:

ՆԳՃ	Հ.ՎԱՐԴԱՆՅԱՆ		Արտաշատի N 1 մանկապարտեզի շենքի հիմնանորոգում <<ՔՆ-ՊԸԱՇՁԲ-16/4>>		
ՆԱԽԱԳԾԵՑ	Կ. ՍԱՐԴԱՐՅԱՆ		ԷԼ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ
				ԱՆ	ԷՏ-1
			ԲԱՑԱՏՐԱԳԻՐ, ԷՏ ՄԱՍԻ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	«ՎԻԼ-ՍԵՄ» ՍՊԸ	
ՊԱՇՏՈՆ	Ա.ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.			